17-091-14

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Սույն աշխատանքային նախագիծը կազմված է

- «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 16.06.2014թ .№-05-31/2313 գրության,
- «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 12.06.2014թ.տեխնիկական առաջադրանքի,
- Արագածոտնի ԳԳՄ 05.06.2014թ. տեխնիկական պայմանների,

Նախագծով կատարվել է միջին ճնշման Ø90x5.2մմ L=1250մ գազատարի վթարային հատվածի վերատեղադրում:

Մ/Ճ Ø76x3.5 մմ գազատարի վերատեղադրումը նախատեսված է անցկացնել փողոցի ճամփեզրով 4.0մ հեռավորության վրա:

Մ/Ճ գազատարի ՊԿ12+50÷ՊԿ12+55 հատվածի տեղադրումը նախատեսված է ստորգետնյա եղանակով, պոլիէթիլենային ՊԷ100 SDR17,6 Ø90x5.2 մմ ԳՕՍՏ 50838-95 խողովակներից:

Գազատարի խորությունը կազմում է 1,0մ, հաշված գազատարից մինչև հողի մակերեսը:

Պոլիէթիլենային գազատարների և պողպատյա խողովակների միացման տեղերում նախատեսվում են գործարանային արտադրության «պոլիէթիլեն-պողպատ» չկազմատվող միացումներ:

Նախագծվող վերգետնյա գազատարի մոնտաժումն իրականացվում է մետաղական հենասյուների վրա H=1,0÷3,5մ, իսկ ճանապարհների հատման տեղերում H= , մ բարձրությամբ: Հենասյուների հեռավորությունը ժպ70մմ L=6.0մ:

Գազատարի կայունությունը ապահովելու նպատակով նախատեսնված են անշարժ հենարաններ:

Գազատարը և հենասյուները կոռոզիայից պաշտպանելու համար նախատեսվում է խողովակների յուղաներկում երկու անգամ:

Շինարարության ավարտից հետո գազատարը ենթարկվում է փչամաքրման և փորձարկման:

Եզրակացություն

Նախագիծը մշակված է համաձայն գործող ՀՀՇՆ -12.03.01-04 «գազաբաշխիչ համակարգեր» ՇՆԶ IV 12.101-04 պահանջների և «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգի պահանջների:

Աշխատանքները սկսելուց առաջ պետք է նշանակվի տեխնիկական հսկողության ներկայացուցիչ պատվիրատուի կողմից:

Նախագծից բոլոր շեղումները պետք է համաձայնեցվեն պատվիրատուի, շահագործող կազմակերպության և նախագծի հեղինակի հետ:

Կազմեց՝ Ն.Պիվազյան